

ԳԵՐ. ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀԸ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Անակնկալ մահը հայ հոգևորականության շարքից խլեց նրա ամենասիրված կարկառուն անդամներից մեկին: Մանր էր Հայոց եկեղեցու կրած հարվածը, է՛լ ավելի ծանր և խոր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և նրա Միաբանության անդառնալի կորուստը: Անցյալ տարի Հայոց եկեղեցին կորցրեց իր նվիրված երեք բարձրաստիճան հոգևորականներին՝ Արսրանյան, Մազմյան և Սյուրմեյան սրբազաններին, իսկ այսօր ողբում է Ռուբեն Սրբազանի կորուստը:

Ոչ ևս է հայրենասեր եկեղեցականը, որը իր ողջ գիտակցական կյանքը ի սպաս դրեց իր ժողովրդին, իր Հայրենիքին, իր պաշտելի հայ եկեղեցուն առանց մնացորդի:

Չենք լսելու նրա քաղցր ձայնը Մայր Տաճարում, երբ Բանին Կենաց քաղցրությամբ և հայրենաբույր պատգամներով մխիթարում էր իր հոտին, բաժանում էր նրա ուրախությունն ու վիշտը հարազատ ու սիրելի հոր նման:

Հանգուցյալ սրբազանը մարմնացումն էր բրիտանական բարոյության, ազնվության, Մի անգամ նրան ճանաչողը չէր կարող ընդմիշտ չսիրել և չհարգել նրան:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ամենանվիրված անդամներից մեկն էր նա. պաշտպանում էր «հոգևոլ և ճշմարտութեամբ» Ս. Էջմիածինը և մինչև իր կյանքի վերջին շունչը կապված է եղել Ս. Էջմիածնի գաղափարին: Մայր Աթոռը, Հայոց եկեղեցին նրա համար հայ ժողովրդի դարավոր պայքարների, հարուստ կուլտուրայի, հայ ժողովրդի հոգու բյուրեղացած մարմնացումն էր:

Երկար ժամանակ հանգուցյալ սրբազանը տառապում էր սրտի, թոքերի, երիկամների և լյարդի ծանր հիվանդություններով: Հակառակ Վեհափառ Հայրապետի բացառիկ հոգատարության և պրոֆեսոր բժիշկների հոգածու խնամքներին, կարելի չեղավ փրկել սիրելի Սրբազանի թանկագին կյանքը: Հունվարի 28-ին, իր մահկանացուն կրեց Ռուբեն Արքեպիսկոպոս Դամբյանը: Նրա մահը խորը վիշտ պատճառեց Ազգիս Վեհափառ Հայրապետի սրտին: Սուգի մեջ է Մայր Աթոռի Միաբանությունը:

Հուղարկավորությունը կարգադրված էր կատարել Կիրակի օրը, Հանգուցյալի դագա-

ղի մոտ հավաքվել էին Միաբանության անդամները, Ճեմարանի ուսանողությունը, հանգուցյալի բարեկամներն ու հարգողները: Դագաղում կարծես իր բնական քնով, մանկական անմեղությամբ, ննջում էր հանգուցյալը, մինչ քահանաները, լուս սաղմոս էին «քաղում»: Ժամը 10-ին, տրվեց եկեղեցու գլխավոր դահլիճը: Դագաղը շրջապատված եպիսկոպոսներով, վարդապետներով և քահանաներով, տարվեց Մայր Տաճար, ուր հավաքված էր վաղուց հավատացյալների բազմությունը:

«Ողջույն»-ի ժամանակ ընդհատվում է Ս. Պատարագը՝ վերջին օծման սրտառու պահն է. հանգուցյալը հրաժեշտ է տալու իր եկեղեցուն, իր ժողովրդին և պիտի զնա միանալու իր նախորդների հոգիներին: Արցունք կա բոլորի աչքերում: Իր հոգու խորը վիշտը դառնալով, Վահան արքեպիսկոպոսը դամբանական է խոսում. «Սիրելի՛ ժողովուրդ, այսօր սուգի մեջ է Մայր Աթոռը. նա կորցրել է իր լավագույն միաբաններից մեկին, որի ամբողջ կյանքը նվիրված է եղել այս եկեղեցուն և իր ժողովրդին: Հանգուցյալը նույնիսկ իր հիվանդության օրերին մտածում էր և հոգում իր Հայրենիքի, իր ժողովրդի և իր եկեղեցու մասին: Նա աշխատում էր անխնայ ու անդադրում: Հայրենասիրություն և եկեղեցասիրություն, — ահա հանգուցյալ սրբազանի մեծագույն արժանիքները: Մեծ է նրա վաստակը Մայր Աթոռում: Այսօր թափուր է մնացել Ռուբեն Սրբազանի տեղը. ահա թե ինչու մեծ է մեր սուգը և անդառնալի մեր կորուստը: Աղոթենք նրա հոգու համար, վառ պահենք նրա հիշատակը և խնդրենք ամենողորմած Աստծուց նոր մշակներ հանել իր հոգևոր անդաստանի համար, ի մխիթարություն հավատացելոց և ի պայծառություն եկեղեցու:»

Դամբանականի վերջում, Վահան սրբազանը դիմառական բառերով դիմում է հանգուցյալին, «Սիրելի Սրբազան, այսօր հեռանում ես մեզանից, մեծ վիշտ թողնելով մեր սրտերում, քեզ սիրող հավատացյալ ժողովրդի սրտերում: Չենք մոռանա քեզ երբեք, կաղոթենք քեզ համար և միշտ կհիշենք քեզ: Երկնային հանգիստ քո հոգուն...»:

Պատարագից հետո ժողովուրդը հրաժեշտ է տալիս հանգուցյալին: Ապա դագաղը բերվում է դուրս: Եկեղեցական թափոր է կազմ-

վում դեպի հինավուրց Ս. Գայանեի վանքը, որ պետք է ամփոփվի սրբադանի աճյունը... Եկեղեցական մահերգի տխուր հնչյունների տակ թափորը հանդիսավորությամբ հասնում է վերջին կայանը: Գերեզմանի եզրին, դազադի վրա, խոսում է Սահակ սրբա-

արժանիքների մասին, ես ուզում եմ շեշտել թե որքան մեծ էր նրա նշանակությունը մեր եկեղեցու համար: Աղոթենք նրա հոգու համար և նրա հիշատակը երկար պահենք: Գնաս բարո՛վ, սիրելի Սրբազան, հավերժական հանգիստ քո հոգուն»:



զանը. «Քիչ հետո հողին ենք հանձնելու մեր սիրելի միաբանակիցներից մեկին, որի անակնկալ մահը մեզ բոլորիս մեծ վիշտ է պատճառել... Նա չեմ խոսում հանգուցյալի

ձեմարանի ուսուցչական կազմի և ուսանողության անունից հարգանքի խոսք է ասում ձեմարանի ղեկավոր Մ. Մինասյանը. «Հոգևոր ձեմարանի ամբողջ ուսուցչական

կազմը, աշակերտությունը և ես խորը ցավակցություն ենք հայտնում էջմիածնի միաբանության անդամ Գեորգի Ռուբեն Աբեղյանի Դավթյանի անակնակալ մահվան առթիվ Վեհափառ Հայրապետին և Սուրբ էջմիածնի միաբանությանը: Սրբազանի մահը ծանր կորուստ է հայ եկեղեցու համար. դադարեց սահելուց նրա բեղուն գրիչը, լուսինն նրա մխիթարական քարոզները, որոնք հաճախ հնչում էին հայ եկեղեցու կամարների տակ: Նա բուցավառ սրտով սիրում էր իր հայրենիքը, իր ժողովրդին և կատարեց պատիվ բերող մեծ աշխատանքներ: Հանգուցյալը դասախոսեց նաև Ճեմարանում, նրա սաները դիտական ու բարոյական մեծ դաստիարակություն ստացան նրանից: Թող նա հանգիստ ներհի, և թող հողը թեթև լինի նրա վրա»:

Ապա աղոթքով, սաղմոսերգությամբ, խնկով դագաղը իջեցվում է գերեզման՝ «Անշարժ եղիցի կնիք տէրութեան ի վերայ բնակարանին ծառայիս Աստուծոյ» և փակվում է գերեզմանը...

Հանգուցյալ Սրբազանը ծնվել է 1878 թվին էրզրումի վիլայեթի Հին Բայազետ գյուղում, աղքատ ծնողների ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի «Միացյալ» ընկերության վարժարանում, ապա շարունակել է Գևորգյան Ճեմարանում, Երկար ժամանակ զբաղվել է ուսուց-

չությամբ: 1944 թվին ընդունում է հոգևոր կոչում: 1945 թվին եպիսկոպոս է ձեռնադրվում և զխավոր աշխատակիցներից մեկն է դառնում «էջմիածին» ամսագրի: 1946 թվին, Վեհափառ Հայրապետը նրան նշանակում է Թեհրանի թեմի առաջնորդ: Հանգուցյալ սրբազանը շատ մեծ աշխատանք է կատարում պարսկահայերի հայրենադարձության գործում, 1948 թվին վերադառնում է Մայր Աթոռ: 1951 թվին մասնակցում է Չեստսլովակիայի Լոկաչովիցի քաղաքում գումարված քրիստոնյա եկեղեցիների կոնֆերանսին: Կոնֆերանսում ելույթ է ունենում հայտարարելով. «Միջազգային փոխհարաբերությունների այս վերին աստիճանի սրված իրադրության պայմաններում, քրիստոնեական չէ՛ այն եկեղեցին, որը խաղաղություն քարոզելու և ստեղծելու համար չունի իր որոշակի մտածումները, Քրիստոնեական չէ՛ այն եկեղեցին, որը ծառայության մեջ է գտնվում պատերազմի հրձիգների մոտ և սատանայական թելադրությամբ կոխվ ու կոտորած է քարոզում»:

Վերադառնալով եկեղեցական խաղաղության կոնֆերանսից, Մայր Աթոռում լծվում է գրական ստեղծագործական աշխատանքի, մինչև որ մահը կտրում է նրա արդյունավետ կյանքի թելը 1952 թվի հունվարի 28-ին, Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի...

